ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ---------------------------------------------

«---------» ----------------------------------------2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշի մարզ

---

Գանձաքարի միջնակարգ դպրոց 10-րդ դասարան

---

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Մարդանյան Քրիստինե Ռուդիկի

---

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023 2024

« ------------ ------------ » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը )** *Դասարանը բաղկացած է* քանութ սովորողից: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Չկան գերազանց սովորողներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են,միջանձնային հարաբերությունները հիմնված են հոգատարության և փոխադարձ հարգանքի վրա:Դասարանում սովորում են կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող հինգ սովորող:Դասարանի որոշ աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է «անբավարար»: Չնայած այս հանգամանքին՝ երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն ուսումնառության ընթացքում: Դասարանում չկան դժվար դաստիարակվող երեխաներ:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուղղված բոլոր սովորողների համար հավասար և մատչելի կրթական միջավայրի ապահովմանը,մասնագիտական կողմնորոշմանը նպաստելուն,ըստ նախասիրությունների և ընդունակությունների որակյալ կրթության իրականացմանը:Այդ նպատակով կանոնավոր և հետևողական աշխատանքներ են իրականացվելու կարգապահությունը և առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ: Հրավիրվելու են ծնողական ժողովներ՝ծնողների հետ կապը սերտացնելու և երեխաների ակտիվ ուսումնառությունը կազմակերպելու նպատակով: որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողունակություններ ,հետևել կարգապահությանը, մաքրությանը, անձնական հիգիենային,ձևավորել համագործակցության, փոխօգնության մշակույթ) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ,բնակավայրի տարածքում գտնվող եկեղեցիներ,մատուռներ,սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Կատարել պատմական ակնարկ՝նշելով հավատքի կարևորությունը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն ապահովել ֆիլմեր դիտելու,երաժշտություն լսելու,պատկերասրահ այցելելու ,բնության հետ շփվելու միջոցով, ցուցադրել և բացատրել գեղեցիկի դերը կյանքում: Ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն: Կազմակերպել քննարկումներ հայրենասիրական թեմաների շուրջ : Ներկայացնել ֆիդայիների,պետական և ռազմական գործիչների կյանքին և գործունեությանը վերաբերող տեղեկություններ, բերել օրինակներ, որտեղդրսևորվել է հայրենասիրություն և ռազմարվեստի ձևեր:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն:Կարևորել ֆիզիկական ակտիվությունը թե՛ դասապրոցեսին,թե՛ դասից դուրս:Սովորողներին մղել առողջ ապրելակերպին

հետևելու,կոփվելու,իրենց հիգիենան առաջնահերթություն համարելու:Երեխաներին մասնակից դարձնել սպորտային տարաբնույթ միջոցառումների:
3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը ,աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ միայն աշխատանքի ու աշխատասիրության միջոցով կարող են իրականություն դարձնել երազանքներն ու նպատակները,ապահովել բարեկեցիկ և հարմարավետ ապագա:
3.6 Բնապահպանական դաստիարակություն :Շրջապատող բնական միջավայրի նկատմամբ հոգատար և պատասխանատու վերաբերմունք ,վարքագիծ ձևավորելու նպատակով կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնություն,փորձել վեր հանել բնապահպանական խնդիրներ ,գտնել լուծումներ:
4. Դպրոց-ընտանիք կապը: Ծնողների հետ հաճախ կազմակերպել հանդիպումներ,քննարկումներ:Ի աջակցություն ծնողների ՝կազմակերպել ծնողավարման դասընթացներ:Ծնողներին առավելագույնս մասնակից դարձնել երեխաների ուսումնական և արտաուսումնական միջոցառումների կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Ուսումնական տարվա մեկնարկը պատշաճ կազմակերպելուն ուղղված կազմակերպչական աշխատանքներ: «Թագադրում» վարժությամբ ձևավորել հանդուրժողականություն: | 1 Սեպտեմբեր 9 | աշակերտ դասղեկ |
| II | «Քանի լեզու գիտես , այնքան մարդ ես » թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհայացք: | 11 Սեպտեմբեր 16 | աշակերտ դասղեկ |
| III | «Եթե ես լինեի ...» թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները: | 18 Սեպտեմբեր 23 | աշակերտ դասղեկ |
| IV | «Կարողությունների հստակեցում » թերթիկի միջոցով հստակեցնել, թե որ կարողություններն են ավելի զարգացած: | 25 Սեպտեմբեր 30 | աշակերտ դասղեկ |
| V | « Ես էլ քեզ նման եմ » թեմայով քննարկումը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: | 2 Հոկտեմբեր 7 | աշակերտ դասղեկ |
| VI | « Բնական պաշարներ » թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ: | 9 Հոկտեմբեր 14 | աշակերտ դասղեկ |
| VII | « Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում» :Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները: | 16 Հոկտեմբեր 21 | աշակերտ դասղեկ |
| VIII | « Պետական խորհրդանիշներ» թեմայով | 2 | աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| | զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման պատմությունը: | Նոյեմբեր 7 | դասղեկ |
| IX | « Էկոլոգիական հիմնախնդիրներ » : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում առկա հիմնախնդիրների վերաբերյալ: | 9 Նոյեմբեր 14 | աշակերտ դասղեկ |
| X | «Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը»:Ասոցացնել հին և նոր դասը ,տալ խնդրին նոր լուծումներ: | 16 Նոյեմբեր 21 | աշակերտ դասղեկ |
| XI | «Գնահատի՛ր ինքդ քեզ»:Նպատակն է ձևավորել արժեհամակարգ ,ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն: | 23 Նոյեմբեր 28 | աշակերտ դասղեկ |
| XII | «Գնահատվող մրցույթ»թեման հնարավորություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները: | 30 Նոյեմբեր Դեկտեմբեր 4 | աշակերտ դասղեկ |
| XIII | «Բնական աղետներ»:Ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները,դիմակայելու ձևերը: | 6 Դեկտեմբեր 11 | աշակերտ դասղեկ |
| XIV | «Կարող եմ օգտակար լինել»թեման հնարավորություն կտա երեխաների մոտ ձևավորել« բարին» բացարձակ արժեք ընկալելու գաղափարը: | 13 Դեկտեմբեր 18 | աշակերտ դասղեկ |
| XV | «Ազգ և պետություն»թեմայով բաց քննարկում և վերլուծություն:Պետության դերի և կարևորության գիտակցում: | 20 Դեկտեմբեր 25 | աշակերտ դասղեկ |
| XVI | «Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին»:Մարդկության անցած ճանապարհի մասին: | 8 Հունվար 13 | աշակերտ դասղեկ |
| XVII | « Ազգային և միջազգային տոներ»: Նպատակն է ներկայացնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունը հոգեկերտվածքի վրա: | 15 Հունվար 20 | աշակերտ դասղեկ |
| XVIII | «Եկեղեցին , ազգը,բանակը » քննարկման միջոցով աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու ,բանակի դերը : | 22 Հունվար 27 | աշակերտ դասղեկ |
| XIX | « Լրատվամիջոցներ և կերպարներ » թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը: | 29 Հունվար Փետրվար 3 | աշակերտ դասղեկ |
| XX | « Բարեկամներ և թշնամիներ» : Քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները: | 5 Փետրվար 10 | աշակերտ դասղեկ |
| XXI | « Ինչպես վարվել աղբի հետ » :Օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու | 12 Փետրվար 17 | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | առողջության վրա: | | |
| XXII | «Սպառողների իրավունքներ»: Ներկայացնել և ձևավորել վերաբերմունք սպառողների իրավունքների վերաբերյալ: | 19 Փետրվար 24 | աշակերտ դասղեկ |
| XXIII | «Քաղաքացիական ինքնություն » : Իմանալ՝ ինչ է քաղաքացիական ինքնությունը , քաղաքացիական պարտքը: | 26 Փետրվար Մարտ 2 | աշակերտ դասղեկ |
| XXIV | « Ինչու է պետք ներառումը» : Աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք : | 4 Մարտ 9 | աշակերտ դասղեկ |
| XXV | « Ապագայի ծառը » խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները | 11 Մարտ 16 | աշակերտ դասղեկ |
| XXVI | « Գնահատվող մրցույթ» : Աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները , կկարողանան խմբում հաջողություն ապահովել: | 18 Մարտ 23 | աշակերտ դասղեկ |
| XXVII | «Նախապաշարումների ուսույն » : Փորձել ներկայացնել, թե ինչպես է ների նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդկանց զգացումները: | 1 Ապրիլ 6 | աշակերտ դասղեկ |
| XXVIII | « Պատասխանատու քաղաքացի » : Աշակերտները կսահմանեն քաղաքացուն բնորոշ հատկանիշները: | 8 Ապրիլ 13 | աշակերտ դասղեկ |
| XXIX | « Պետք է արդյոք խնայել » : Խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը՝ ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք: | 15 Ապրիլ 20 | աշակերտ դասղեկ |
| XXX | « Հայոց Մեծ եղեռն» : Սովորողներին ներկայացնել կատարված ոճրագործությունը : Ձևավորել հայրենասիրություն: | 22 Ապրիլ 27 | աշակերտ դասղեկ |
| XXXI | « Ասացվածքի ամբիոն »: Սովորողներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության արժեքներին: Զարգացնել բարոյական արժեքներ: | 29 Ապրիլ Մայիս 4 | աշակերտ դասղեկ |
| XXXII | «Ազգային զարթոնք»: Ձևավորել ազգային գիտակցություն ,արժեհամակարգ: | 6 Մայիս 11 | աշակերտ դասղեկ |
| XXXIII | « Աշխատակից ենք ընտրում »: Որակներ,որոնք կարևոր են բոլորի համար: | 13 Մայիս 18 | աշակերտ դասղեկ |
| XXXIV | « Ձեռքբերումներս» խորագրով քննարկման կազմակերպում: | 20 Մայիս 25 | աշակերտ դասղեկ |

## ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

| Անցկացման օրը | Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|
| 1-ին շաբաթ 01-02.09 09.09 | Հոգեբանական հնարքի կիրառում.թագերի պատրաստում:Ջերմ միջավայրի ստեղծում :Կազմակերպչական աշխատանքներ | |
| 2-րդ շաբաթ 16.09 | Էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր – մշակութային կենտրոն | |
| 3-րդ շաբաթ 23.09 | Դասախոսություն .« Հայաստանի Հանրապետության» | |
| 4-րդ շաբաթ 27-30.09 | Մոմավառություն | |
| 5-րդ շաբաթ 05-07.10 | Մեր կյանքում կարևոր մարդիկ.ուսուցիչ | |
| 6-րդ շաբաթ 14.10 | Զրույց. «Մասնագիտություն,որով հրապուրված եմ» | |
| 7-րդ շաբաթ 21.10 | Զրույց բնության հետ ,բնության գրկում | |
| 8-րդ շաբաթ 04.11 | Քննարկում. «Իրավունք և պարտականություն» | |
| 9-րդ շաբաթ 11.11 | Քննարկում.«Պետականության գաղափարը» | |
| 10-րդ շաբաթ 18.11 | Համայնքային հիմնախնդրի բացահայտում | |
| 11-րդ շաբաթ 25.11 | «Պատասխանատվություն».առաջարկում ենք լուծման տարբերակներ նախորդ հանդիպման ընթացքում վեր հանած խնդիրների | |
| 12-րդ շաբաթ | Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ | |

| | | |
|---|---|---|
| 02.12 | | |
| 13-րդ շաբաթ 09.12 | Զրույց .«Ինչպես դիմակայել աղետներին,ստեղծել առավել անվտանգ միջավայր» | |
| 14-րդ շաբաթ 16.12 | Քննարկում. «Կյանքի իմաստի որոնումներում» | |
| 15-րդ Շաբաթ 23.12 | Կազմակերպել և իրականացնել տարեմուտի միջոցառում | |
| 16-րդ շաբաթ 20.01 | «Կերպարներ,որոնք ոգեշնչում են» .քննարկում | |
| 17-րդ շաբաթ 27.01 | Ազգային և միջազգային տոներ.տոնը ազգային առանձնահատկությունների բացահայտման միջոց | |
| 18-րդ շաբաթ 03.02 | Դասախոսություն և ֆիլմի դիտում «Հայոց բանակ » թեմայով | |
| 19-րդ շաբաթ 10.02 | Մեդիագրագիտություն,կեղծ և իրական կերպարներ,լրատվամիջոցների դերը: | |

| | | |
|---|---|---|
| 20-րդ շաբաթ 17.02 | Զրույց. «Բարեկամներ և թշնամիներ,հանդուրժողականություն և տկարություն» | |
| 21-րդ շաբաթ 24.02 | «Երկրորդ կյանք աղբին».քննարկում<br><br>«Մաքուր միջավայր».քննարկում | |
| 22-րդ շաբաթ 02.03 | «Պատասխանատու քաղաքացի» | |
| 23-րդ շաբաթ 09.03 | Զրույց .«Ես քեզ նման եմ » | |
| 24-րդ շաբաթ 16.03 | Կանանց իրավունքները.«Հայ կանայք ,որոնք փոխել են աշխարհը»: | |
| 25-րդ շաբաթ 23.03 | Վիկտորինա .«Արդեն գիտեմ…» | |

| | | |
|---|---|---|
| 26-րդ շաբաթ 06.04 | «Ինչ ցանես,այն էլ կհնձես».անդրադարձ տարվա ընթացքում կատարած աշխատանքներին | |
| 27-րդ շաբաթ 13.04 | Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ | |
| 28-րդ շաբաթ 20.04 | Քաղաքացիական դիրքորոշում | |
| 29-րդ շաբաթ 27.04 | «Խնայել…ինչու» բանավեճ | |

| | | |
|---|---|---|
| 30-րդ շաբաթ 04.05 | Անրի Վերնոյի «Մայրիկ»ֆիլմի դիտում | |
| 31-րդ շաբաթ 11.05 | «Հաղթանակ և պարտություն» թեմայով դասախոսություն | |
| 32-րդ շաբաթ 18.05 | Այցելություն «Անհայտ զինվորի հուշարձան» | |
| 33-րդ շաբաթ 25-26.05 | «Ազգային արժեքներ»<br>«Ինչ եմ պաշարել,ինչ եմ հավաքել…» | |
| 34-րդ շաբաթ 27.05 | Ճանաչողական էքսկուրսիա | |